

## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից՝ վարկի գումար, ժամկետ, մարումների քանակ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{\left(1 + i\right)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

**i** – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման **ընդհանուր ծախսն** է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու **այլ վճարումները**, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

**A** – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

**n** – սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) **այլ վճարումների** գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում վարկի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) **այլ վճարումների** կատարումը համարվում է մեկ վճարում:

**N** - վարկի մարմանն (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) **այլ վճարումների** գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո սպառողի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

**Kn** - սպառողի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) **այլ վճարումների** գումարներ):

**Dn** – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ: